ԼՈՒՍԻՆԵ ՍԱՆՍԱՅԱՆ

ԻՆՏԵԳՐԱՏԻՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՎԱԳ ԴՊՐՈՑՈՒՄ

Դպրոցն սերտորեն կապված լինելով շրջակա աշխարհի և հասարակության հետ, իր կյանքի վրա անմիջականորեն զգում է արտաքին գործոնների հզոր ազդեցությունը, որոնք նրա առջև սկզբունքորեն նոր հոգևոր-բարոյական և սոցիալ-տնտեսական փոփոխությունների պահանջ են դնում պայմանավորված համաշխարհային զարգացման միտումների մի ամբողջ շարքով:

Այսօր, գլոբալ հիմնախնդիրների ծագումն ու աճը ավագ դպրոցականներից պահանջում է նրանց լուծման համար անհրաժեշտ նոր մտածողություն, քաղաքական ու սոցիալական ընտրության հնարավորության ընդլայնումը դպրոցին դնում են նման ընտրության պատրաստ քաղաքացիների ձևավորման անհրաժեշտության առաջ, որոնց իրականացման և կազմակերպման խնդիրը դրված է պետական մակարդակով նախագծված դաստիարակչական համակարգի կիրարկման վրա:

Իհարկե այս ուղղությամբ քայլեր կատարված են: Այսպես, ՀՀ ազգային ժողովի կողմից հաստատված «Կրթության զարգացման պետական ծրագրում. 2001-2005թթ.» որպես «ռազմավարական գլխավոր ուղղություն դրված է ներդաշնակորեն զարգացած, սոցիալապես գործուն և ստեղծագործ, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորմանը միտված կրթության համակարգի առաջանցիկ զարգացման գաղափարը որպես պետականության ամրապնդման և հասարակության սոցիալ-տնտեսական առաջընթացի գործոն» [7:էջ9]: Որպես արդյունք, նպատակ է հետապնդվում ունենալ համակողմանի և ներդաշնակ դաստիարակված ավագ դպրոցականներ, որոնց զարգացած անձը իր բնութագրով և վարքագծով կընդլայնի գիտելիքների ծեռք բերման, մասնագիտական կարողությունների և հմտությունների մարդկային նոր հնարավորությունները, կձևավորի մարդկային հզոր կապիտալ մտավոր մեծ ներուժ, առողջ և մրցունակ հասարակություն, իրավական պետություն, որակյալ կյանք, ինչը կհանդիսանա տնտեսական աճի կարևորագույն նախապայման:

Այս արդյունքին հասնելու և ավագ դպրոցականների համակողմանի և ներդաշնակ դաստիարակության խնդիրը լուծելու համար ավագ դպրոցում պետք է կազմակերպել և իրականացնել *ինտեգրատիվ դաստիարակություն*:

Իսկ ի՞նչ պետք է հասկանալ ինտեգրատիվ դաստիարակություն ասելով և ի՞նչ քայլեր պետք է ծեռնարկել ավագ դպրոցում ինտեգրատիվ

դաստիարակություն իրականացնելու համար: *Ինտեգրել* տերմինը՝ ենթադրում է *միավորում, համալրում, գումարում:* Հետևաբար. *ինտեգրատիվ դաստիարակությունը* դաստիարակության ամբողջական համակարգի համալրումն է, հավելումն է նոր բաղադրիչներով, դաստիարակության համակարգի ադապտացման, կատարելագործման և անկատարության (պայմանավորված վերջին ժամանակների համաշխարհային, տեղային սոցիալ-տնտեսական, պետական և քաղաքական իրադարձություններով) վերացումն է:

Ավագ դպրոցականների ինտեգրատիվ դաստիարակության էությունը և առանցքային հասկացությունը համակողմանի և ներդաշնակ զարգացած ավագ դպրոցականն է, որի նպատակն է դպրոցականին դաստիարակել ոչ թե սոսկ որպես գիտելիքների որոշակի պաշար կրող օբյեկտի, այլ, ակտիվ սուբյեկտի, նախ և առաջ, որպես հասարակության լիարժեք քաղաքացի, ակտիվիստ իրեն բնորոշ գաղափարական հիմնադրույթներով, աշխատանքի, խոսքի և վարվելակերպի բարձր մշակույթով, բարոյականությամբ ու գիտակցված շահերով, գեղագիտական և էկոլոգիական խնդիրներով մտահոգ, հայրենասիրական և հումանիստական գաղափարներով օժտված, ավանդականի և ժամանակակիցի ներդաշնակ համատեղմանն ունակ, ճկուն և հարմարվող քաղաքացիներ: Այսպիսի որակների առկայությունը կատարելություն չէ, այլ հանդես է գալիս համաշխարհային մշակութային, տնտեսական և կառավարման ոլորտներում մրցունակության անհրաժեշտ նախապայման:

Իսկ ավագ դպրոցականների ինտեգրատիվ դաստիարակության գործառույթներն են.

- դաստիարակության համակարգը համապատասխանեցնել ժամանակի և հասարակության պահանջներին,
- նպաստել դաստիարակության արդյունավետության բարձրացմանը,
- օժանդակել ավագ դպրոցականի համակողմանի և ներդաշնակ զարգացմանը,
- իրագործել դաստիարակչական գործընթացի օպտիմալացման գործառույթ:

Նշված յուրաքանչյուր կետը շատ կարևոր է, քանի որ գործ ունենք սոցիալական մի ինքնուրույն ենթախումբ կազմող, հասարակության մեջ իրեն բնորոշ տարիքային, հոգեբանական և անձնային առանձնահատկություններով առանձնացող ավագ դպրոցականի անձի հետ: Ըստ հոգեբաններ Ռ.Գոուլդի, Ջ. Վեյլանտի և Դ. Լևինսոնի. «...այս շրջանը ծնողներից հեռացման, հասունացման շրջան է, ինքնուրույնության, անկախության պահանջ է ի հայտ գալիս...»: Իսկ ամերիկացի հոգեբան Գ. Շիհին այս տարիքում որպես առաջնային հիմնախնդիր է դիտարկում կյանքում և հասակակիցների միջավայրում ավագ

դպրոցականի սեփական տեղի և դերի, սեռադերային կողմնորոշման, աշխարհայացքի և աժեքների վերջնաձևավորման գործընթացները [7:էջ10]: Բոլոր դեպքերում, ավագ դպրոցական տարիքը բնորոշվում է հայացքների և համոզմունքների ամբողջացմամբ, աշխարհայացքի ձևավորման համար վճռորոշ շրջանով, արժեքների վերագնահատմամբ, որտեղ կենտրոնական տեղ է գրավում սոցիալ-բարոյական արմատական խնդիրները խմբավորված կյանքի իմաստի շուրջ: Աշխարհայացքի բոլոր կարևոր հարցերը ոչ միայն պարզապես կոգնիտիվ-իմացական արժեք ունեն, այլ կապվում են ավագ դպրոցականի համար կենսական ուղու հետագա զարգացման խնդիրների հետ: Ահա թե ինչու՞ այս շրջանում հատկապես պետք է ուժեղացնել դաստիարակչական ներգործության ազդեցությունը, բովանդակությունն ու խորությունը:

2005-07թթ. ուսումնական տարիների ընթացքում մեր կողմից իրականացվել են տարբեր բնույթի ուսումնասիրություններ, հարցումներ բանավոր և գրավոր, հետազոտություններ հանրապետության 3 դպրոցների ավագ դպրոցականների շրջանում, 20 դպրոցների տնօրենների, ինչպես նաև ծնողական և ուսուցչական կոլեկտիվներում (3 հիմնական դպրոցներ Պեյո Յավորովի անվան թիվ 131 դպրոց, Վահան Տերյանի անվան թիվ 60 դպրոց, Սյունիքի մարզի Քարաշենի դպրոց (աղ.պայմանական #), ԲՈՒՀ-եր ԵՊՄՀ, «Վիլյամ Սարոյան» համալսարանի մանկավարժական և ուսանողական կոլեկտիվներ):

Հարցումների արդյունքները ապացուցում են մեր այն վարկածը, ըստ որի ավագ դպրոցում համակողմանի և ներդաշնակ զարգացման համար դաստիարակչական համակարգը թերի է. այն պետք է ինտեգրվի դաստիարակության նոր բաղադրիչներով: Արդյունքների հետ համաձայնել են մանկավարժների զգալի զանգվածը հանրապետության 20 դպրոցների տնօրեններ և ընդհանուր թվով 350 ուսուցիչ, իսկ ԵՊՄՀ, «Վիլյամ Սարոյան» համալսարանի դասախոսական և ուսանողական կոլեկտիվների միջին ցուցանիշով մոտ 75%-ը.

Ըստ վերլուծության տվյալների ավագ դպրոցում ընդգծված խնդիրներ կան դաստիարակության հետևյալ բաղադրիչներում.

	Դաստիարակության բաղադրիչ	Դասախոսակ. կոլեկտիվ (%-ներով)		Ուսուցչական կոլեկտիվ (%-ներով)			Ուսանողներ (%-ներով)		Ավագ դպրոցական (%-ներով)		
		ԵՊՄՀ	Վ.Ս.	131	60	#	ԵՊՄՀ	Վ.Ս.	131	60	#
1	Բարոյական դաստիարակություն	65	75	40	40	95	35	45	35	25	15
2	Գեղագիտական դաստիարակություն	20	45	40	35	45	15	30	30	40	35
3	Հայրենասիրական դաստիարակ.	85	50	55	50	65	55	45	55	75	60
4	Աշխատանք. դաստիարակ. և մասնագ.կողմ	55	85	75	85	45	55	77	75	65	55
5	Սեռական դաստիարակություն	65	60	90	95	50	95	85	95	95	70

Դաստիարակության ցանկացած կողմի թերագնահատումը վնաս է հասցնում ավագ դպրոցականի անձի ձևավորման ամբողջական գործընթացին: Դաստիարակության նման կարևոր բաղադրիչների հարցում դպրոցի ուսումնադաստիարակչական գործունեության նկատմամբ անտարբերության կամ թերացման գրանցումը աղետալի հետևանքների կարող է հանգեցնել և անհրաժեշտ են լուրջ քայլեր ձեռնարկել: Իսկ այն, որ նման խնդիր արձանագրվել է մեր կողմից փաստում են մեր հարցման արդյունքների աղյուսակը, որոնք արտահայտված են տոկոսային հարաբերակցությամբ:

Այս հիմնախնդրի որպես իրատեսական լուծման տարբերակ ենք առաջարկում *ինտեգրատիվ դաստիարակության* կազմակերպումը ավագ դպրոցում:

Ինտեգրատիվ դաստիարակության բաղադրիչները բաղդատենք և յուրաքանչյուրի ուղղությամբ տանք մեր առաջարկները.

- մտավոր դաստիարակության
- ֆիզիկական դաստիարակության
- գեղագիտական դաստիարակության
- բարոյագիտական դաստիարակության

ա/ հայրենասիրական դաստիարակության

բ/ կրոնական դաստիարակության

գ/ սեռական դաստիարակության

- աշխատանքային-մասնագիտական դաստիարակության
- տնտեսագիտական դաստիարակության
- իրավական և գաղափարաքաղաքական դաստիարակության
- էկոլոգիական դաստիարակության հանրագումար:

1.--Ավագ դպրոցականների գեղագիտական դաստիարակության բաղադրիչով. ավագ դպրոցականների երաժշտական կրթադաստիարակչական մակարդակը բարձրացնելու և հնարավորինս բարձր գեղագիտական /մասնավորապես երաժշտական/ ճաշակ ձևավորելու նպատակով

• ավագ դպրոցի առաջին տարվա /9-րդ դասարան/ ուսումնական պլանում ինտեգրել հավելյալ շաբաթական մեկ պարտադիր դասաժամ նախատեսված «Դասական և ազգային երաժշտություն» առարկայի համար.

• ավագ դպրոցի հաջորդ տարվա /10-րդ դասարան/ ուսումնական պլանում ինտեգրել ավագ դպրոցականի նախասիրությամբ ընտրվող հավելյալ շաբաթական մեկ պարտադիր դասաժամ «Հայկական ժողովրդական գործիքների պատմություն», «Դասական և համաշխարհային ժամանակակից մշակույթ», «Փոփ կամ ռոք ուղղություններ».

• ավագ դպրոցականների ընդհանուր գեղագիտական դաստիարակության և գեղագիտական բնութագրի ձևավորման առկա թերությունների շտկման նպատակով ավագ դպրոցի ուսումնական պլանում ինտեգրել հավելյալ շաբաթական 1 պարտադիր դասաժամ նախատեսված «Վարքի և խոսքի գեղագիտություն» առարկայի համար:

2.--Ավագ դպրոցականների բարոյական դաստիարակության բաղադրիչով՝ հայրենասիրական դաստիարակության գծով.

• ավագ դպրոցականների ազգային-ավանդական մտածողության ձևավորման և զարգացման համար ավագ դպրոցում ըստ ուսումնական պլանի սահմանել շաբաթական պարտադիր մեկ դասաժամ *«Հայրենիք և էթնիկական մշակույթ»* առարկայի դասավանդման համար (կամ կոտորակով «Կրոնի պատմություն» առարկայի հետ).

3.--Ավագ դպրոցականների բարոյական դաստիարակության բաղադրիչում սեռական դաստիարակության գծով.

• յուրաքանչյուր դպրոցում ստեղծել սեռահոգեբանի անկյուն՝ ավագ դպրոցականների սեռական բնույթի խնդիրների անհատական անկաշկանդ քննարկման և վերլուծման համար.

• ավագ դպրոցում ավելի կենտրոնացված ուշադրություն դարձնել դպրոցականների սեռական կողմնորոշման և լուսավորման վրա, բարոյական կերպարի աղավաղումներից խուսափելու համար.

• հետևողական լինել ավագ դպրոցականների մոտ սեռային հոգեբանաֆիզիոլոգիական բարդույթների ծագման և լուծման հարցում,

• 11-12-րդ դասարանում «Սեռական լուսավորություն» առարկա ինտեգրել ընդհանուր ուսումնական պլանում [6:էջ 42],

2.--Ավագ դպրոցականների մասնագիտական և աշխատանքային դաստիարակության բաղադրիչով.

• ավագ դպրոցականների մասնագիտական կողմնորոշման խնդիրները լուծելու համար՝ յուրաքանչյուր դպրոցում ստեղծել մասնագիտական կողմնորոշման հոգեբանամանկավարժական անկյուն՝ մանկավարժ-հոգեբան-սոցիոլոգ-վերլուծաբան մասնագետների առկայությամբ.

Ավագ դպրոցականների ինտեգրատիվ դաստիարակության համակարգում նոր բաղադիչների համալրման և հավելյալ առարկաների տեղակայման առումով, տարածքի և ժամանակի խնդիրը լուծելի է նոր կրթակարգի պայմաններում 12-ամյա դպրոցի ուսումնական պլանները նոր հնարավորություն են ստեղծում հավելյալ բաղադրիչներ ինտեգրելու և դաստիարակության համակարգը կատարելագործելու համար: Մնում է մշակել կրթդաստիարակչական կուռ ռազմավարություն, իրականացման համապատասխան

օրենքներ և պայմաններ, քանի որ վերակառուցվող հասարակության համար գերակա են դառնում ժամանակի պահանջներն ու հասարակական արժեքները:

Ուստի գիտատեխնիկական առաջընթացը և քաղաքացիական նոր հասարակությունների կառուցումը, նրանցում մեր ավանդապաշտ հայ ժողովրդի ինտեգրման գործընթացները արագացնելու և իրականացնելու պայմանը ինքնըստինքյան թելադրում է ուսումնական նոր առարկաների և դաստիարակության բաղադրիչների ներառումը ավագ դպրոցում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Խոսքի զարգացում» , Տեսություն և պրակտիկա, Ձանգակ-97, 2004 թ., 288 էջ
2. Խոլոպյան Գ. Տ. «Սովորողների կոմպլեքսային դաստիարակության հարցերը», Լույս, 1980թ.
3. «Կրթությունը Հայաստանում անցումային շրջանում» /սեմինարների և գիտաժողովների ժողովածու/, Երևան, Եր.համալս.հրատ., 2000թ.
4. «Հասարակագիտության ինտեգրված ուսուցում», Ձեռնարկ մանկավարժների համար, /Ս. Պետրոսյան, Ս. Խաչատրյան, Հ. Խաչատրյան և ուրիշներ/, Երևան «Լուսաբաց հրատարակչություն», 2006 թ. 428էջ
5. Հովակիմյան Գ.Պ., «Ազգային ավանդույթների և սովորույթների հոգեբանություն», Երևան, 2005 թ., 220 էջ
6. «ՀՀ հանրակրթական դպրոցներում սեռական դաստիարակության ուղղությամբ տարվող աշխատանքները» /հոդված՝ Լ.Մանասյան/, «Մանկավարժական միտք», 2-3, 2005թ.
7. ՀՀ օրենք «Կրթության մասին», 1999թ. ապրիլի 14
8. Вишняков С. М. «Профессиональное образование», Словарь. М., 1999 г., стр. 266
9. Искуство: Интегративний курс. 1-9к. М., Рекорд, 1997 г.
10. Sheehy G. Passages <Predictable crisis of adult life>. N.Y.,1976,էջ32